№ 12 ՇԱԲԱԹ 26 ՄԱՐՏԻ № 12

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ԿՈՍԱՆԴՐՈՊՈԼԻՍ ՏԱՐԻ

ԱՅՍՏԱՂԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆ 10 ՄԻԱՁԱԿ ՅԱԹԵՐԻ ՎՃԱՐՆ Է 1 ԿՈՊԵԿ: Ձայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով.

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ՕՐ ՄԻ ԹԵՐԹ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 6 Ռ. Ծտարարաղարացիք դիմում են ուղղակի Въ редак. газеты „Пчела Арменіи“.

Առաջիկայ շաբաթ, ստողների պատճառով «Մեղու» չի հրատարակվիլ:

ԹԻՖԼԻՍ 26-ԻՆ ՄԱՐՏԻ

Ազգանդրապօլից անդադար էլի տեղեկութիւններ են մեր խմբագրութիւն թղթակցութիւնք թէ տեղական և թէ ներկայ դարձան լեզուով: Թող ներեն մեզ մեր թղթակիցք, որ չենք կարողանում բոլորը հրատարակել, վասն զի մեր թերթի փոքրութիւնը չէ ներում. բայց և այնպէս կը խնդրենք, որ շարունակեն իրանց թղթակցութիւնքը: Այդ գրութիւնքը, գրեթէ բոլորն էլ բովանդակում են իրանց մէջ միայն ցանկութիւն և պահանջ, որ արդարութիւնն երևան դայ քննութեանց ժամանակ, որ պիտի անէ Սուրբ Էջմիածնից ուղարկած քննիչը: Ամենքը միայն արդարութիւն, արդարութիւն և անկողմնապահութիւն հուսթիւն բղաւում են: Զղիտենք, մի՞թէ մեր հոգևոր վարչութիւնն չունի արիութիւն արդարութիւնը հանդէս բերելու. մի՞թէ նա դորա համար չէ՞, այլ նորա վեհեմ պարոքը չէ՞: Այնտեղ ուր մաքերը վատված են, ուր կրքերը շարժած են, ուր գործված անարդարութիւնքը ժողովրդը յորից ապատան արել են և սրան շարժել, միակ միջոցն է խաղաղութիւն վերականգնելու համար, խստիւ պատժել անարդարութիւնն և հանդէս բերել արդարութիւնը: Ապա թէ ոչ նոյն իսկ վարչութիւնը պէտք է հասարակաց համարմունքն ու վարկը կորցնելու վտանգի մէջ ընկնի:

Ա՞ինչ օգուտ դրանից— բայց եթէ մի մեծ ջնաս ազգի միութեան: Ամեն վարչութիւն օգտակար է, քանի նա վայելում է յարգ և վարկ ժողովրդից, որ են կառավարում է:

Արդարութեան ձայնը ճնշելով խաղաղութիւն վերականգնել ձգտիլը— կնշանակէ կայծից հրդեհ բալձրացնել: Որքան արդարութիւնը հալածվի, այնքան նա ապստամբում ատելի խստութեամբ և անընկճելի բուռն զօրութեամբ հանդէս դուրս կ'գայ և այն ժամանակ վայ ճնշողներին: Այն ժամանակ ոչ մի աւանդութիւն, ոչ մի պատմական իրաւունք կարող չէ ժողովրդեան վրդովմունքը ճնշել—դա արդէն դառնում է ծովի կատաղի ալիք, որոնք ամենահաստատ և ամուր նաւերն էլ խորտակելու կարող են: Այլ թէ այսպիսի հանգամանքում ժողովրդեան յուզմունքն ինչ ելք կունենայ, անգուշակելի է: Մի՞թէ պատմութեան մէջ քիչ են օրինակներ այսպիսի յուզմունքների. մի՞թէ նոքա մեզ խրատ չպիտի լինին: Մեր հոգևոր իշխանութիւնը, կարծես, բնաւ չէ կամենում օգուտ քաղել պատմական փորձերից և ամեն ինչ ինքը կամենում է անձամբ փորձել:

Նա գեռ ևս կարծես հետևում է այն փուճ ու նեխած և ամեն կանոնաւոր կառավարութիւնից արհամարհված գաղափարին, թէ մի պաշտօնատարի թերութիւնք հանդէս բերելը նոյն իսկ կառավարութեան արատ է: Ամեն պաշտօնատար և գործակատար մի անհատ է, որ կարող է ունենալ իւր անձնական շահերն, որոնց զոհ կառավարութեան յարգն էլ, նորա հաւատարմութիւնն էլ. մի՞թէ այդպիսի պաշտօնատարի կամ գործակալի խոյտա-

ՔՍԱՆՍԲՈՐԴ ՏԱՐԻ

ռակումն արատ կարող է բերել կառավարութեան.— բնաւ ոչ: Այլ ընդհակառակն կառավարութիւնն ինքը պատժում է այդպիսեաց և արդարութեան պաշտպան հանդիսանում, որ չկորուսանէ ժողովրդեան վարին ու պահպանէ նորա շահերը: Մի՞թէ քիչ է պատահում, որ կառավարութիւնը պատժէ կաշառակեր, ժողովրդեան նեղացնող պաշտօնեաներին: Բայց այս լուսաւոր հայեցուածքը գործի վերայ կարծես մեզ համար չկայ. դեռ ևս շատ կան մեր մէջ մինչև անգամ բարձրաստիճան եկեղեցականներ, վարչական պաշտօնեաներում, որոնք կարծում են, թէ նեղացած ժողովրդեան ձայնը լսելն ու պահանջները կատարելը իշխանութեան յարգը վայր գցել է, ժողովրդեան հաշիւ պահանջելն իւր գործերի վերաբերութեամբ անիրաւութիւն է. Նոքա դեռ ևս վարակված են այն հին բանաւորական ախտով, որ ծածկում էր նոցա ամեն անկանոնութիւնքը:

Բայց այս ընթացքը ներկայումս միայն կարող է առաջնորդել դէպի եկեղեցական վարչութեան, եկեղեցական դասի և սուրբ Աթոռի նշանակութեան անկումն, որ շատ և շատ ցաւալի երևոյթ պիտի լինի ամեն ճշմարիտ Հայի համար, որ ձանաչում է նոցա նշանակութիւնն ազգի համար ներկայումս: Մենք իբրև նախանձախնդիր, ըստ մեր հասկացողութեան, ազգի շահերին, որոնք մենք տեսնում ենք հոգևոր վարչութեան և ազգի սերտ կապի մէջ, եկեղեցական դասի բարձր նշանակութեան և ազդեցութեան մէջ, որ նա պէտք է ձեռք բերէ և պահպանէ արժանաւորութեամբ և արդարութեամբ ևոչ աւանդութեամբ ու բռնութեամբ, յայտնում ենք մեր խորին

Այդ ձև խօսող և գործողներն, իրաւ է, սիրելու բան չեն, բայց

«Ափսոս կարող չէ իւր արիւնի մէջ
Լողացող զոհը գոլասանութեան
Տաղեր նուագել զոհողի համար»

(փորձ № I)

Բնական է, որ փորձը նմանապէս և Մեղուն դառնութիւն չէին պատճառիլ ոչդրին, եթէ նոքա մոռանային ծանր իրողութիւններն, ազգային ձախորդութեանց կենդանի նշաններն և փոխանակ հառաչելու, մեկնէին նոցա, ներողամիտ լինէին, յորդոր լինէին չարագործութիւնների, եթէ նոքա հաւատային թէ

«Վիպերս ճկած՝ սրտով խոնարհնք,
Տիրասէր հպատակ լինինք ու ծառայ,
Նորա անունը աղօթքով յիշենք
Խրճմուկ Հայ ազգիս դուէչ մնդքանայ»

(փորձ № III)

այն ժամանակը գուցէ ոչ փորձը և ոչ Մեղուն ձգվէին բարկութեամբ յատակի վերայ և նոցա ազնիւ հրատարակողները և հեղինակները անէծքի, հայհոյանքի չարժանային:

Բայց... լռելու ընդունակութիւնն ունին միայն մունջն և անդամալուծը կամ որին անտարբեր է ազգի անբաղդութիւնը: Իսկ այդ երկու հրատարակութիւնները նուիրելով իւրեանց աչխատութիւնները մեր ազգի և եկեղեցւոյ չահերին և բարերաղդութեան կրնում են իւրեանց վերայ սրբազան կոչումն լինել հայելի մեր ազգային դրութեան և նորա կեանքի բովանդակութեան:

Տեսնում ես, որ այսօր այսինչ տեղ փլաւ և աւերակ եղաւ մի եկեղեցի, որտեղ մուտք գործելը երկիւղալի է, կամ որոյ դրութիւնը պատասխանելի է— ինչ է պատճառը,— անհոգութիւն— փող չկայ:— Այսինչ տեղ գուցէ գոլվում են ուսումնարաններն, ուսուցիչները ռօճիկ չեն ստանում— ինչ է պատճառը,— փող չկայ: Այսինչ տեղ ազգային հաստատութիւնք լի են անընդունակներով — ինչ է պատճառը,— փող չկայ: Այսինչ տեղ եկեղեցին փակվեցաւ, ննջեցեալը չի թաղվում և տանը նեխվում է, պսակը չի կատարվում, երեխան չի մկրտվում,-ինչ է պատճառը- փող չկայ ճաչոցը գնելու: Այսինչ տեղ եկեղեցին աղքատ է և անմաքուր թէպէտ և ունի մեծ արդիւնք,— ինչ է պատճառը,— փող չէ մնացել երեցփոխանի ձեռքում, և այլն:

Իւրաքանչիւր եկեղեցի ունի իւր ազգային արդեանց աղբիւրները, ուսումնարանները նմանապէս, վանքերն և անապատները նմանապէս: Ազգի հոգն և սէրը դէպի նոքա մեծ է և առատ: Նա այդ զգացմունքներով չատ դարեր մնդել է և պահանջել է անթիւ եկեղեցիներ և վանքեր և բաղաձրել նոցա քանակութիւնը: Մնդել է և պահանջել է անթիւ եկեղեցական և վանական ապաստարներ, և երբէք այդ պատճառաւ չեն նուազել մեր պատմութեան մէջ այն մուրացկանութեան և չնամոթութեան մէջ, որոնք այսօր սովորական են դառել: Մեր ազգը իւր եկեղեցին պահել է և պաշտպանել է պատով և փառքով, հոգևորականին նա յարգել է, հնազանդել է ըստ արժանոյն:

Այսպէս է կրթուած մեր ազգը, և այսպէս է նա հասկանում իւր պարտաւորութիւնները այսօր ևս: Այս պատճառաւ մեծ թչուառ դրութեան մէջ է նա տեսնում իւրեան, երբ նկատում է այնպիսի երևոյթներ, որ ևս արդէն նկարագրեցի: Որևիցն բնական և իրաւացի իղձերը է ժողովրդի և նորա ներկայացուցիչների կողմանէ անդադար հարցանել «ինչ է պատճառը: Ազգային այդ հետաքրքրութիւնը պատմական հաստատութիւնն է զանում կարապետ Արքեպիսկոպոսի կեանքի և կենսագրութեան մէջ (Տես փորձ № III). ինչպէս մենք գիտենք միևնոյն կենսագրութիւնից կարապետ Արք եպիսկոպոսը մի որբ, աղքատ, հարստութիւնից, ծնողներից զրկուած մի երեխայ էր: Իսկ նա իւր մանից զկնի Թողեց անազին հարստութիւն. որ նա ձեռք էր բերել. Հարստութեան աղբիւրներն էին անտեսութիւն, աշխատավարձներ, նուիրատուութիւններ և այլն. Այդ ամենը ունեցել է և ստացել է Արքեպիսկոպոսը չնորհիւ իւր այդ բարձր և սրբազան կոչման, որ կրել է իրրև եկեղեցւոյ սպասաւոր և միայն իւր այդ յատկութիւնով. Ազգը այդ ընծայաբերութիւնը տվել է նորան միայն այն գաղափարի ստիպմամբ, որ Հայոց պատմական և անձնական ևրնութեան մէջ և սուրբ սպասաւորները միշտ ձևացել են իրրև մի անանձնատէր, մի ամբողջ բարոյական մարմին: Հոգևորականը եկեղեցւոյ գաղափարից դուրս գոյութիւն չէ ունեցել մեր ազգային ստեղծագործութեանց մէջ: Այդ պատճառաւ ազգը առանց խնայողութեան ընծայել է կղերին հարստութիւններ հաւատալով և համոզուած գոլով, որ հոգևորականի պայծառութիւնն է միևնոյն ժամանակ պայծառութիւն եկեղեցւոյ և ազգի: Անձնական հարստութիւն տալը աբեղային չէ մտել ազգի հոգատարութեանց չրջանի մէջ, որովհետև աբեղային ազգը ճանաչել է լոկ և լիապէս եկեղեցւոյ ծառայ: Ամենայն նուիրատուութիւն ժողովրդի կողմանէ իւր վարդապետին սրբագործվում է «պահպանիչով» և աղօթքով: Նուիրատուութեան փոխարէն այդպիսի վարձատրութիւնը չէ կղերի սեպհականութիւն, այլ է նշան, եթէ կարելի է այսպէս մեկնել,— եկեղեցւոյ վարձատրութեան, սորա սպասաւորների միջնորդութեամբ: Ահա այն մտածողութիւնն և զգայմունքներն, որ ժողովուրդը սեպհականացրել է իրան իւր եկեղեցւոյ սպասաւորների

Ա Զ Գ Ա Ց Ի Ն

Անցեալ տարուայ գեկտեմբերի 14ին տեղի ունեցած մահը Սուրբ Էջմիածնի միաբան Աբել Արքեպիսկոպոսի շատ իսաւակցութեանց առարկայ եղաւ և մենք մեր

ստացած Թղթակցութիւնն այս մասին յետաձգեցինք ցայժմ մեզնից անկախ պատճառներով, ինչպէս երկիցս յայտնած ենք Մեղուի մէջ, մինչև մեր ստացած ստոյգ տեղեկութիւնները զանազան միջոցներով սոսկացնին մեզ այն, ինչպէս և նոյնանման Թղթակցութիւնը և՛ Ալանեան Յովհաննէս Արքեպիսկոպոսի Թաղման վերաբերութեամբ, հանդէս բերել է ցաւ սրտի ամեն մարդասէր և քրիստոնեայ մարդու: Ընդ Թերցողք կանսնեն երկու Թղթակցութեանց մէջ ևս այնպիսի բուռն վարմունք, Թէ անկարող հիւանդի և Թէ հանգուցեալ երկու սրբազանների դիակների հետ, որ վրդովեցուցէ և քստմնելի է մինչև անգամ շատ փոքր մարդկային զգացմունք ունեցողի համար: Այդպիսի վարմունքը միայն սառնութեամբ կարելի է կարդալ, երբ նորա գործողը մի Լանկեմատեր է, Չինկիզխան և կամ մի Նինիշարի, որոնց մէջ տգիտութիւնից և գազանական կրքից ամեն զգացմունք բթացած է, որոնց զլկավարն ու օրէնքը իրանց քարացած և անզգայացած սրտերի կիրքերն են: Բայց միՔէ հնարաւոր է որևէ միջոցով արդարացնել այդպիսի վարմունք և վերժնդրութիւն հանգուցեալ Սրբազանների դիակների դէմ մի վեհեմ եպիսկոպոսական պաշտօն կրող անձնի կողմից: Ո՞վ է այդ զգուելի և խայտառակ բարբարոսութիւնը գործողը—մի հայ եպիսկոպոս, որ ամեն օր կրկնում է իւր վարդապետի Քրիստոսի խօսքերը, Թէ սիրեցէք զթշնամիս ձեր և բարի արարէք ատելեաց ձերոց, մի հայ եպիսկոպոս, որոյ նշանաբանը պէտք է լինի ներողամտութիւն, մի հայ եպիսկոպոս, որ սիրոյ և ողորմածութեան օրինակ պիտի լինի, որ կարօտելոց օգնող, հիւանդաց խնամող և մխիթա-

ՔՍԱՆՍԲՈՐԴ ՏԱՐԻ

վերաբերութեամբ: Եւ իսկ այդ գաղափարին հետևելով մեր եպիսկոպոսները, վարպետներն, եկեղեցիք և վանքեր դարերով ժողովել են հարստութիւններ, մասամբ պահել, մասամբ կորցրել. իսկ այդ ճանապարհով կարապետ Եպիսկոպոսը նմանապէս ձեռք բերեց կայք և կալուածքներ. Մենք գիտենք, որ «մեծաւորը» երեք դրութեանց արժանացրեց իւր ձեռք բերածը: Մի մասն ազգի համար անհետացաւ, մեւս մասը տրվեցաւ Ախալցխայ եկեղեցիներին, և երրորդ մասը ընծայեց նա իւր մերձաւոր ազգականներին: Կենսագրութիւնից երևում է, որ կարապետ Արքեպիսկոպոսը Թողեց մի անվաեր կասկ, որով ժողովուրդից ստացած հարստութիւնը, որ մասամբ ասելագրած էր հոգատարութիւնով և անտեսութիւնով, բաժանել էր կամենում եկեղեցիներին և իւր բարեկամ—ազգականներին:

Համեմատելով ասածներս հանգուցեալ կարապետ Արքեպիսկոպոսի այդ կարգադրութեանց հետ, ես կամենում եմ դնել այստեղ մի հարց, մի անպին մեծութեան խնդիր՝ այն է. ունի արդեօք իրաւունք մի վանական անձն կատակել յօգուտ այս կամ այն անձանց այն հարստութիւնն, որ նա ձեռք է բերել իւր կոչման չնորհիւը:

Վճռենք այս հարցը, ընթերցող, մի կողմը դնելով իրաւաբանական համեմատութիւններն և հիմնվելով միայն ազգային և մեր անհատական խղճմտանքի ցուցմունքների վերայ: Մեր վանքերի պարսպները պահում են իրանց մէջ փոքրաւորներ զանազան անուններով. մեկը մանեմ է, միւսը ազակերտ է նսլես: Նոցա անկողինն է գետինը, բարձը— մի մեծ քար. սուրբ ոչինչ չունին, չեն ժառանգում, չեն աշխատում. սուրբ միայն ազօթում են, երգում են և մասամբ ուսանում են: Խաղը կոյր է. մեն-

ՄՈՍԿՈՎՍԿԻ ՎԱՂՎԱՆՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹ

(Ռուսերեն «ՄՈՍԿՈՎՍԿԻ ՎԱՂՎԱՆՑ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԼՐԱԳՐԻ)

Մոսկվայի Ս. Լազարյան դպրոցի հայ աշակերտները Ռուսերենի ուսուցիչ Ա. Ի. Ալեքսեյի ղեկավարությամբ

ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մոսկվայի Ս. Լազարյան դպրոցի հայ աշակերտները ռուսերենի ուսուցիչ Ա. Ի. Ալեքսեյի ղեկավարությամբ ուսումնասիրել են հայ ժողովրդի պատմությունը, նրա կյանքն ու սովորությունները, ինչպես նաև հայ գրականության որոշ նմուշներ։ Ուսումնասիրության արդյունքները նրանք ներկայացրել են հատուկ այդ նպատակով հրավիրված հանդիսավոր նիստում։ Ներկա են եղել դպրոցի տնօրենը, ուսուցիչները, աշակերտների ծնողները, ինչպես նաև հայ գաղութի մի շարք ներկայացուցիչներ։

Նիստը բացելով՝ տնօրենը հայտնել է, որ հայ աշակերտները ռուսերենի դասերի ժամանակ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԴՎԱԺԴՈՒ

Ի Տփղիս, 20-ին մայիսի 1877 թ.

Ներկայումս ամենայն ուշադրութեամբ հետևում ենք Ռուսաստանի և Թուրքիայի միջև սկսված պատերազմի ընթացքին, որ ամենայն հավանականությամբ ընդհանուր եվրոպական պատերազմի է վերածվելու։ Ռուսաստանի կայսրը, ինչպես հայտնի է, հրամայել է իր զորքերին անցնել Դանուբը և Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Բուլղարիայի տարածությունը։ Ռուսական զորքերը, որոնք կազմում են մոտ 200 հազար հոգի, անցել են Դանուբը Սիստովի և Գալաթի մոտ և արդեն գրավել են Տուրնա, Բիելա, Սիստով, Ռուշուկ, Ալեքսանդրիա, Գիրսով, Տարնովա, Ֆլամբուրգ, Կալարաշ, Ֆետեշտի, Ջուրջևո, Կարակալ, Կալիմանչա, Սլատինա, Ռասգրադ, Տուլչա, Իսակչա, Մաչին, Բրաիլով, Գալաց, Ռենի, Իզմայիլ, Կիլիա, Վիլկով, Տարուտինո, Բոլգրադ, Կոմրատ, Իրմիչլի, Ֆալչի, Բենդեր, Ակերման, Ակկերման, Ակկիրման, Ակկիրմանի, Ակկիրմանիա, Ակկիրմանիայի, Ակկիրմանիայից, Ակկիրմանիայից, Ակկիրմանիայից

ԱՂՈՒՑ ԱՇԽԱՐՀԻ ՄԵՐ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԹԵՐԹ

Տարի Ա. Տպագրութիւն Ա. Յովհաննէսեանց և Ընկ-ի

ԱՄՍԱԳԻՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԻՒՂԱՑԻ 25-ՐՈՒ ՄԱՐՏԱ 1877 Թ.

ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Հրատարակիչ՝ Ն. Ն. Ա ր ա մ ա ն ո վ

Խմբագիր՝ Ա. Ա ր ա մ ա ն ո վ

ՕՖԻՑԻԱԼ ՄԱՍ

Ի ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային ժողովի նախագահ՝ Ա. Արամանով

Ազգային ժողովի անդամներ՝ Ա. Ալամդարեան, Ա. Ալամդարեան, Ա. Ալամդարեան,